2021թ. առաջին կիսամյակի արդյունքների հակիրճ նկարագրություն[1]

Մակրո շրջանակ և ֆինանսական հատված	
Դրական զարգացումներ	**Բացասական զարգացումներ**
2021թ. I կիսամյակում գրանցվել է 5% տնտեսական ակտիվության աճ:	6-ամսյա գնաճը կազմել է 5.7%՝ գերազանցելով ՀՀ ԿԲ-ի նպատակային ցուցանիշը:
Հարկային եկամուտները (ներառյալ՝ պետական տուրքերը) և այլ եկամուտները համապատասխանաբար 7.7% ով և 38.7%-ով գերազանցել են կիսամյակային ճշտված ծրագիրը՝ կազմելով 750.2 մլրդ դրամ և 36.3 մլրդ դրամ: 2020 թ. I կիսամյակի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 10.3% ով կամ 74.2 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է հարկային եկամուտների աճով:	2021թ. I կիսամյակում արտաքին առևտրաշրջանառության աշխարհագրական կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել, այսինքն արտահանման աշխարհագրությունը ունի խիստ կենտրոնացված բնույթ
ՀՀ դրամով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 11.6%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 0.2 տոկոսային կետով: Արտարժույթով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 7.8%՝ նվազելով 0.1 տոկոսային կետով:	Վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացել է՝ ներկայումս կազմելով 6.5%:
Դոլարայնացման մակարդակը նվազել է: Ռեզիդենտների արտարժութային ավանդներ/ընդամենը ավանդներ հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.9 տոկոսային կետով՝ կազմելով 42.6%, իսկ ռեզիդենտների վարկավորման ընդհանուր կառուցվածքում արտարժույթով վարկերի կշիռը նվազել է 2.0 տոկոսային կետով՝ կազմելով 46.4%:	Ֆինանսական շուկայում արտարժույթով և դրամով միջին կշռված մինչև 1 տարի ժամկետով տոկոսադրույքների միջև սպրեդը 2021 թ. I կիսամյակում նախորդ տարվա նկատմամբ աճել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 5.0:
Առևտրային հաշվեկշիռը ցուցաբերել է բարելավման միտում (10.9%-ով)՝ հիմնականում ի հաշիվ պղնձի միջազգային գների աճի:	

[1] Ուսումնասիրությունը հիմնված է բյուջեի հաշվետվության պաշտոնական տվյալների վրա:

Իրական հատված	
Դրական զարգացումներ	**Բացասական զարգացումներ**
Արդյունաբերության համախառն թողարկումն աճել է 2.1%-ով՝ հիմնականում պայմանավորված հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում (նպաստումը՝ 1.4 տոկոսային կետ) և էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում (նպաստումը՝ 1.3 տոկոսային կետ) ենթաճյուղերի աճերով:	Մշակող արդյունաբերություն ենթաճյուղի կրճատումը 0.7 տոկոսային կետով հակազդել արդյունաբերության ընդհանուր աճին: Մշակող արդյունաբերության ենթաճյուղի նվազումը հիմնականում պայմանավորված է ոսկերչական և ծխախոտի արտադրատեսակների արտադրության ծավալների նվազմամբ:
Գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքն աճել է 6.5%-ով՝ հիմնականում պայմանավորված բուսաբուծության աճով (նպաստումը՝ 7.2 տոկոսային կետ):	Անասնաբուծության նվազումը հակազդել է ճյուղի ընդհանուր աճին (նպաստումը՝ 0.9 տոկոսային կետ): Նվազումը պայմանավորված է եղել ձվի արտադրության, ինչպես նաև սպանդի համար նախատեսված գյուղատնտեսական կենդանիների և թռչնի իրացման նվազմամբ: Սրանք շատ վատ հեռանկարային զարգացումների ազդակներ են:
Շինարարության ճյուղում գրանցվել է 10.8% աճ՝ հիմնականում պայմանավորված պետական բյուջեի (նպաստումը՝ 10.3 տոկոսային կետ) և բնակչության միջոցներով (նպաստումը՝ 4.4 տոկոսային կետ) իրականացված շինարարության ծավալների աճերով:	Կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության ծավալների նվազումը հակազդել է ընդհանուր շինարարության աճին (նպաստումը՝ 5.8 տոկոսային կետ): Սա չափազանց բացասական ազդակ է, քանի որ սովորաբար կազմակերպությունների կողմից շինարարության ծավալների աճը նշանակում է պահեստային տնտեսությունների և ըստ այդմ ապագա հավելյալ դրական զարգացման նախադրյալներ:
Ծառայություններն աճել են 2.7%-ով՝ հիմնականում պայմանավորված կացության և հանրային սննդի կազմակերպում (նպաստումը՝ 3.2 տոկոսային կետ), ինչպես նաև տեղեկատվություն և կապ (նպաստումը՝ 2.2 տոկոսային կետ) ենթաճյուղերի աճով, իսկ առևտրի 8.0% աճը հիմնականում պայմանավորված է մեծածախ առևտրի աճով (նպաստումը՝ 7.2 տոկոսային կետ):	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ենթաճյուղի նվազումը հակազդել է ընդհանուր ծառայությունների աճին (նպաստումը՝ 8.9 տոկոսային կետ):
Շահումով խաղերի կազմակերպման հետ կապված գործունեությունը նվազել է 38%-ով, ինչը կարևորվում է ինչպես ընդդիմության, այնպես էլ կառավարող ուժի կողմից:	

Ներդրումներ, կապիտալ ծախսեր	
Դրական զարգացումներ	**Բացասական զարգացումներ**
Պետական ներդրումներն աճել են:	Մասնավոր ներդրումները նվազել են:
Կապիտալ ծախսերի ճշտված ծրագրի կատարողականը բարելավվել է 24.8 տոկոսային կետով (64.3%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 39.4%-ի դիմաց):	Կապիտալ ծախսերը կազմել են 77.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 66.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է պաշտպանությանն ուղղված ծախսերի աճով: Կապիտալ ծախսերի ճշտված ծրագրի կատարողականը կազմել է 64.3%: Չնայած նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ բարելավմանը՝ կապիտալ ծրագրերի կառավարման խնդիրը շարունակում է մնալ արդիական: Հիմնականում ցածր կատարողական է արձանագրվել արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի մասով, որոնց շրջանակներում օգտագործվել է կիսամյակային ծրագրված միջոցների 51.7%-ը:

Աշխատաշուկա	
Դրական զարգացումներ	**Բացասական զարգացումներ**
	Աշխատանքի շուկայում էական վերականգնում դեռևս չի արձանագրվել: Թեև 2021թ. I եռամսյակում գործազրկության մակարդակը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ նվազել է 2.7 տոկոսային կետով՝ կազմելով 17.0%, գործազուրկների թիվը նվազել է 17.1%-ով, սակայն զբաղվածների թիվը նույնպես նվազել է՝ 0.2%-ով: Աշխատանքային ռեսուրսների թիվը կրճատվել է 3.5%-ով, իսկ աշխատուժի առաջարկը (տնտեսապես ակտիվ բնակչություն)՝ 3.6%-ով:
	2021թ. I կիսամյակում պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 1.6%-ով՝ կազմելով 62,322 մարդ:
	2021թ. I կիսամյակում միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 5.4%-ով՝ կազմելով 196,440 դրամ: Այնուհանդերձ իրական աշխատավարձը 2020թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 0.3%-ով, ինչը նշանակում է, որ միջին վիճակագրական աշխատողը «աղքատացել» է: